Յոբնաղիոս, արարեր զտուն իմ այրս աւազակաց՝ բոզոց և պոռնկաց և չնանոց։ Եւ բացաւ առաջի նորա խորհրդանոց, եւ սկիհն էր աղտեղեալ եւ փոշոտեալ կտաւով ծածկեալ, և ասաց Տէրն. հանէք և ձգեցէք արտաքս, զի չէ դա իմ, եւ յանագանոսն ասէ. ե՛լ աստի, և նա ասէ. ողորմութեամբ օգնեա ինձ Տէր։ Եւ վերացաւ Տէրն, և լուաւ Յոբնաղ զբանն, և գիտացեալ եթէ համբաւեալ էր տեսիլն, և ի գիշերի ա-ներևոյթ արարին զանագանոսն»(*) (Գ. Թղ. էջ 514)։

10. Ս. Աննայի fողին պատմութիւնը.— Aptի (Ֆբրանսա) գաւառական փոքր քաղաքին հին մայր եկեղեցին դարերէ ի վեր կը պահէր թանկագին մասունքներու հետ քող մը՝ որ կը կարծուի թէ բերուած էր Արեւելքէն՝ քրիստոնէական առաջին դարերուն, Ս. Կոյսի մօր՝ Ս. Աննայի մարմնոյն հետ։ Տարուէ տարի այս մասունքները կը ցուցադրուէին հաւատացեալներուն, մասնաւորապէս կանանց, վասնզի աւանդու-

(*) Ասկաղոնցի Յովհաննէս Ռուփոս քահանայ ձեռնադրուած էր 476ին Անտիոքի մէջ Պետրոս Թափիչ պատրիարքէն եւ անոր քարտուղարն էր։ Պատրիարքին ախոռէն յեռոյ Յովհաննէս մեկնեցաւ Երուսաղէմ ուր ճանչցաւ Պետրոս վրացի միաբնակ եպիսկոպոսը՝ որուն յարեցաւ եւ յաջորդեց իբր եպիսկոպոս Մաեումայի (Գազայի նաւահանգիստ)։ Ան յունարէն լեզուաւ գրի առած է գործ մը (512-518) ընդդէմ Բաղկեդոնի ժողովոյն, եւ որ կը բաղկանայ շարք մը տեսիլներէ, հրաբներէ եւ նախազուշակութիւններէ՝ որոնք բերանացի հաւաքուած են Պետրոս վրացիէն եւ շրջակայքէն։ Նոյն գործը կը կոչուի Plérophories եւ հայերէնի ալ համառօտ կերպով թարգմանուած է եւ հրատարակուած **Գիրք Թղթոցի** եւ **Միքայէլ Ասորիի Պատմութեան** մէջ։ Գիրք Թղթոցէն մենք ալ քաղած ենք Ս. Տեղեաց վերաբերեալ հատուածները միայն, ինչպէս պիտի երեւին մեր այս աշխատութեան ընթացքին՝ աւանդական դէպքեր անունով։